



Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք



Ա.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՂ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն թեմակալին Վրաստանի և Իմերէթի յաղագս թոյլ տալոյ յաջորդին Ախալցխոյ ունել զաթոռ յեկեղեցւոջ: Թ. 1196.

— Յանուն նոյն թեմակալին, որ յաղագս կատարելոյ զհանդէս ջրօրհնեաց ի Գանձակ յեկեղեցւոջ: Թ. 1197.

— Յանուն վիճ. Կոնսիստ. Արցախոյ, որով թոյլ տուաւ փոխադրել զգլխի հանգուցեալ Եւզինէի Գաւիթբէկեան ի Յազրութ գեղջէ ի գերեզմանատան Շուշուայ: Թ. 1206.

— Յանուն Մաշթոց վարդապետի, որով պատուիրեցաւ հանել զչորս ազգային գիւղս ի կապալառու բէկէն և յանձնել փոխանորդին Ղարաղաղի Տ. Մեսրոպ վարդապետի Մագսուտեան ի հսկել և վճարել զ300 թուման հասանելի արգիւնս Արամեան դպրոցին: Թ. 1211.

— Յանուն Մեսրոպ վարդապետի Մագսուտեան փոխանորդին Ղարաղաղի ի նոյն միտս: Թ. 1219.

— Յանուն թեմակալին Շամախույ յաղագս արձա-
կելոյ զԵփրեմ վարդապետն ի Կոնստանտնուպոլսէ տեղւոյն և
յղելոյ ի Տփլիս ի ստանձնումն նորոգ պաշտամանց՝ վա-
նահօր ս. Սարգսի և անդամոյ Կոնստանտնուպոլսի վրաս-
տանի: Թ. 1213.

— Յանուն կառակատարաց Ղուկասեան կաակի,
որով պատուիրեցաւ յանձնել Մնայուն Յանձնաժողովոյ
Կրօնա-պատմական թանգարանին վանսոյ աւագ եկեղեցւոյ
քսան և հինգ հազար (25000) ռուբլիս՝ գործադրել ըստ
գորութեան կտակին: Թ. 1217.

— Յանուն Մնայուն Յանձնաժողովոյ Կրօնա-պատ-
մական թանգարանին Տփլիսեաց, որով յայանեցաւ վերոյ-
գրեալ կարգադրութիւնն: Թ. 1218.

— Յանուն հաստատութեան Յովհաննէս քահանայի
Եղիվարդցեան ի ծխատերութիւն Մանչէստրի: Թ. 1230.

— Յանուն Հոգ. Կառավ. Ն. Նախիջևանի, որով լու-
ծեցաւ պսակն պարսկահայատակ Միքայէլի Պետրոսեան
Բաղդանեանց ընդ կնոջ նորա Յուստիանեայ, թոյլ տալով
առն այժմէն պսակիլ և կնոջն՝ յետ երկուց ամաց: Թ. 1244:

— Յանուն թեմակալին Արցախոյ, որով արտօնեցաւ
տալ Սամուէլի Գիւլգատեանց ամսական քսան և հինգ
(25) ռուբլի ի վիճ. արդեանց տեղւոյն: Թ. 1245.

— Յանուն Գեր. Տ. Ներսէս արքեպիսկոպոսի, որով
պատուիրեցաւ գնալ ի Պետերբուրգ և անձամբ ընդ Մես-
րոպ վարդապետի մատուցանել զինդիր վեհին առ Տ.
Նախարարն Ներքին Գործոց: Թ. 3.

— Յանուն Տ. Մեսրոպ վարդապետի վասն ընկերա-
նալոյ Տ. Ներսէս արքեպիսկոպոսի իբրև պատգամաւոր
վեհափառ Հայրապետի: Թ. 5.

— Յանուն թեմակալին Շամախույ, որով արտօնեցաւ
հրաւիրել զՏ. Ընձակ վարդապետն ի պաշտօն անդամու-
թեան Կոնստանտնուպոլսի և վանահօր Սաղիանու: Թ. 10.

— Յանուն վիճ. Կոնսիստ. Վրաստանի և Իմերէթի, որով պատուիրեցաւ թողուլ վանահօր Հաղարծնոյ վանուց զարդունս չորից գիւղօրէիցն—Դիլիջանի, Պօղոս Քիլիսայի, Չարխէչի և Գօշ Միսիթարայ: Թ. 16.

— Յանուն Սինօզի Ս. Էջմիածնի, որով առաջադրեցաւ ի նորոյ տալ ընթացս գործոյ պսակալուծութեան նիկողայոսի Գէօրչայեան Տփլիսեցւոյ: Թ. 26.

— Յանուն թեմակալին Աստրախանի, որով արտօնեցաւ պսակն աստրախանցի Դանիէլի Մկրտումեան Սարգսեանց ի հինգերորդում աստիճանի՝ ազգակցութեան հանգերձ խորթութեամբ: Թ. 53.

— Յանուն թեմակալին Ամերիկայի Յովսէփ արքեպիսկոպոսի Սարաճեան, որով յանձնարարեցաւ մատուցանել զչնորհաւորական ուղերձն նորին Սրբութեան առ Նախագահն Ամերիկայի պ. Թէօֆոր Ռուզվէլտի, և յայտնեցաւ արքեպիսկոպոսին, թէ նա ունի մնալ յԱմերիկա: Թ. 54.

— Յանուն վիճ. Կոնսիստ. Վրաստանի և Իմերէթի, որով արտօնեցաւ պսակ նունեայ Բարսեղեան Ղալամքարեանց ընդ տասնամեայ կենակցին իւրում Յովհաննիսի Սահաթսագեան: Թ. 75.

— Յանուն գործակալին Եկատերինօզարի Արսէն քահանայի Վարդանեան, ընդ որում յղեցան ի քննութիւն երկու խնդիրք տաճկահպատակ ամուսնոց Սարգսի և Նազուրի Ուստեանց: Թ. 80.

— Յանուն Եղիշէ, Յուսիկ և Մատթէոս վարդապետաց ի զննել զթղթեան հաշւոց վանուցն Տաթևու և Հոգ. Կառավարութեան տեղոյն: Թ. 89.

— Յանուն փոխանորդին Տաթևու Ներսէս վարդապետի, որով արտօնեցաւ վերածել յաղօթատուն զսեղանատունն հոգեհացի կսռնձօր գեղջ վիճակին մինչ զչինութիւն նոր եկեղեցւոյ: Թ. 91.

Բ.

Հայրապետական շնորհակալիք եւ օրհնութիւնք.

Կոնդակ յանուն տիկին Դարիայի Միքայէլեան Յովհաննիսեանց, որով յայտնեցաւ գոհունակութիւն յաղագս նուիրեալ գրչագրաց հանգուցեալ Արգարու մատենադարանի Մայր Աթոռոյ, Թ. 1201.

— Յանուն Միմէօնի Խաչ, Իգիթիսանեանց Գլօրդեակ քաղաքի վասն նուիրեալ միոյ մագաղաթեայ աւետարանի Մատենադարանի Մայր Աթոռոյ, Թ. 1227.

— յ2ն յունուարի 1905 ամի օրհնութեան և քաջալերութեան յանուն Եղիայի Սուսանեանց վասն ուսումնարանի նորա, որ ի Գավրէժ, Թ. 2.

— Յանուն Ղզլարեցի ս. Մատթէոսի Մարգարեան Աբրահամեանց վասն արարեալ նովաւ նորոգութեանց վանուցն ս. Գէորգայ, որ ի Ղզլար, Թ. 13.

— Յանուն տիկին Եղիսարէթի Մարգոսեան Միրզոյեանց վասն կատարելոյ նորա զնորոգութիւն վանուցն Շաւնարաթի, Թ. 63.

— Յանուն տիկին Աննայի Յովհ. Ղուկասեանց վասն ընդունելութեան նորին Սրբութեան, Թ. 64.

Գ.

Հայրապետական պարգևք.

Կոնդակ լանջախաչի յանուն Զաւէն վարդապետի գործակալին Բագուայ, Թ. 1229.

— Յանուն Ներսէս քահանայի Տ. Կարապետեան, որով պարգևատրեցաւ կամիլաւիայիւ, Թ. 1231.

— Յանուն Յովհաննէս քահանայի Քրիստափորեան Չալթըր գեղջ Ն. Նախիջևանի, որով պարգևատրեցաւ Լանջախաչիւ թ. 9.

— Կամիլաւկայի յանուն Մուշեղ քահանայի Վարդապետեան Շուշույ թ. 36.

— Աւագ քահանայութեան յանուն Յովհաննէս քահանայի Տ. Գրիգորեան Շուշույ թ. 37.

— Լանջախաչի յանուն Խորէն քահանայի Իսկանդարեան Շուշույ թ. 38.

— Լանջախաչի յանուն Մեսրոպ քահանայի Ապրէսեան Շուշույ թ. 39.

— Կամիլաւկայի յանուն Մաղաթիա քահանայի Տ. Գրիգորեան Խնուշինակ գեղջ թ. 40.

— Աւագ քահանայութեան-յանուն Յարութիւն քահանայի Վարդապետեան Շուշույ թ. 41.

— Ս և Ճաղկեայ կերպանեայ փիլոնի յանուն Տ. Արտակ վարդապետի, գործակալին Ն. Բայազիդու թ. 87.



ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՅՕԳԻ ԹՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Սինոդը գեկտեմբերի 18-ին ստանալով նահանգական կառավարութեան գրութիւնը Արթիկ գիւղի նոր եկեղեցու շինութեան թոյլտուութեան մասին, որոշեց ծանուցանել այդ Երևանի վիճակային Կոնսիստորիային և վերադարձնելով հաստատուած յատակագիծը, հրամայեց ձեռնարկել տաճարի կառուցման:

Դեկտեմբերի 29-ին Սինոդը լուծեց Թախտախանի վառինկա Վանեանցի ամուսնութիւնը Պետրոս Վանեանցի